ԱՐԵՆԻԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԸ

ՍՈՒՐԵՆ ՈՍԿՈՒՄՅԱՆ

Արենին (Արփա) Վայոց Ձորի հինավուրց և նշանավոր բնակավայրերից է։ Գյուղի և առհատարակ այդ հատվածի պատմությունն ամբողջացնելու համար կարևոր են այնտեղ պահպանվող վիմագիր արձանագրությունները, որոնք, սկսած անցյալ դարի կեսերից, արժանացել են տեղագրողների ու պատմաբանների ուշադրությանը[1]։

Արենիի միջնադարյան վիմագրերի առավել ամփոփ հավաքածուն ներկայացրել է Ս. Բարխուդարյանը[2]։ Անվանի վիմագրագետը գյուղի տարածքից ընդօրինակել է 9 արձանագրություն (որոնցից 3-ը՝ առաջին անգամ), երկուսի գծագիրն ստացել է Հ. Եղիազարյանից և ներկայացրել է դրանց վերծանությունը։ Նախկին տեղագրողներից մեջ է բերել Մոմկաշեն տաճարի՝ «Ս. Աստվածածնի շրջապատի գերեզմանատան մեջ անցյալներում» եղած 9 արձանագրություններ ևս[3]։ Այսպիսով, Արենիից «Դիվանի» 3-րդ պրակի մեջ ամփոփվել են 20 արձանագրություններ, որոնցից հնագույնը 1303 թ. է[4], իսկ վերջինը՝ 1708 թ. (թվակիր են 15 վիմագիր)։

1971, 1975 թթ. Արենիի եկեղեցու շրջապատի փլատակների մաքրման ընթացքում հայտնաբերվել են թմբուկի ձևավոր քարեր և արձանագրված ու անհիշատակագիր տապանաքարեր։ Արձանագրված խաչքարեր ու տապանաքարեր են հայտնաբերվել նաև վանքի շրջակա գերեզմանոցում։ Այսպիսով, այդ տարածքից հայտնաբերված արձանագրությունների թիվը հասել է 60-ի, որոնցից հնագույնը և պատմականորեն արժեքավորը 1191 թ. արձանագրությունն է, իսկ վերջինը՝ 1815 թ. (թվագրված են 40 արձանագրություն)[5]։ Չեն գտնվել Քաջբերունու ընդօրինակած և «Դիվանի» 72, 73, 77, 79 համարների տակ դրված վիմագրերը, որոնցից երեքը եղել են խաչքարերի վրա։

Ստորև ներկայացնում ենք Արենիի 43 անտիպ վիմագրերը, իսկ 12-ը վերահրատարակում ենք լրացումներով ու շտկումներով, որոնցից 5-ը համարվել են կորած։

---

1 Ջալալյանց Սարգիս արքեպիսկոպոս, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, Քաջբերունի (Բժ. Դաբրիել Հովհաննիսյան), Ճանապարհորդական նկատողություններ («Փորձ», 1877—1879, «Արարատ», 1888—1891 թթ.), Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893։

2 «Դիվան հայ վիմագրության» (այսուհետև՝ «Դիվան»). պրակ III, Վայոց Ձոր, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 28—33։

3 Նույն տեղում, էջ 30—33։

4 1303 թ. արձանագրությամբ խաչքարը ընկած էր գյուղի հյուսիս-արևելյան կողմում, Եղեգնաձոր տանող ճանապարհի կեռմանի ձախակողմյան բարձունքի վրա։ Հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության աշխատակից Շ. Մակյանը 1973 թ. այն, երկու այլ խաչքարի հետ, վերատեղադրել է իր նախնական տեղում։

5 Նախորդ տեղագրողների կողմից փաստագրված արձանագրությունների հետ մեկտեղ Արենիի վիմագրերի թիվը հասնում է 64-ի, որոնցից թվագրված են 43-ը։

Արենի դյուզի հնագույն վիմագիրը հայտնաբերվել է 1971 թ., Աստվածածին եկեղեցուց մի փոքր հարավ, գերեզմանոցում։ Թերատված խաչքարի ստորին մասում, խաչքանդակի և ագուցման պոչի միջև փորված քառանկյունի փոսորակում (նկ. 1) գեղեցիկ, կանոնավոր, մանր տառերով փորագրված է.

ՈՒ (1191) ԹՈՒԱՐԿԱՆԻՆ ԵՍ ԱԽԹԱՄԱՐ, Ծ-
ԱՌԱՅ ԱՐՍՈՒԾՈՅՑ, ՄԱՆԱՒԱՆԴ ՊԵՏ ԳԱ-
ՒԱՌԻՍ, ՇԻՆԵՑԻ ՁՏՈՒՆ ԱՂԱՒԹ-
ԻՑՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՁՍ ՅԻ-
ՇԱՏԱԿ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԾՆԱՒՂԻ
ԻՄՈՅ ԳՐԻԳՈՐԻ. ՅԻՇԵՄՑՆՔՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ։



Նկ. 1. 1191 թ. արձանագրություն։

Ախթամարյան «զարմքն... ի հին ժամանակաց բնակեալ էին յԱուփայ գիւղն»[6]։ Նորահայտ արձանագրության հավաստմամբ, Ախթամար Արփայեցին XII դ. վերջում և XIII դ. սկզբում, նախքան Զաքարյանների կողմից Սյունիքի ազատագրումը, եղել է Վայոց Ձորի իշխանապետը։ Եվ պատահական չէ, որ նա նշանակալից դեր է խաղացել նահանգի քաղաքական ու մշակութային կյանքում։ Անվանի զորապետը, Վասակ Խաչենցու (Պռոշ իշխանի հոր) հետ, XIII դ. սկզբում «հրամանաւ և ուժով Իվանէի» ազատագրել է գավառի ռազմապաշտպանական կարևոր հանգույց Հրասեկա բերդը[7]։ Ախթամարյանները լրջորեն մտահոգվել են նաև Նորավանքի նյութական ապահովության խնդրով և վանքին են նվիրել իրենց հայրենական Դայեկի քարի այգու վերին բաժինը[8]։

6 Ս տ. Օ ր բ ե լ ե ա ն, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 368։
7 Նույն տեղում, էջ 350։
8 Նույն տեղում, էջ 368, 491։

XIII դ. 70—80-ական թվականներին Սարդիս եպիսկոպոսը Ավեշ գյուղը, Արփայի երկակն ջրաղացը, երեք ճորտեր, գյուղի այգիներից Ախթամարենց բաժինը[9], այլ հասույթների հետ, ընծայում է Նորավանքի իր կառուցած հյուրատանը։ Այգին, անշուշտ, պատմիչի հիշատակած Դայեկի քարն է[10], որի վանքապատկան լինելը վերահաստատվում է։ Օրբելյանը որոշակի մատնանշում է նույնիսկ երկքար-երկակն ջրաղացի տեղը՝ կամրջի մոտ[11], որը Նորավանքի անխախտ ժառանգությունն էր։

Նորահայտ վիմագրի վկայությամբ, Գրիգորի որդի Ախթամարը XII դ. Արենիում կառուցել է «աղոթքի տուն»՝ եկեղեցի, որի առթիվ էլ դրվել է այս խաչքարը։ Ախթամարի եկեղեցին, թերևս, եղել է Մոմիկի կողմից 1321 թ. կառուցված և ներկայումս պահպանվող տաճարի հյուսիսային կողմում, որի ստորին շարքերը պետք է որոնել ավերակների տակ։

Նորահայտ հաջորդ արձանագրությունը գտնվում է եկեղեցուն արևմուտքից կից, ավերված գավթի սալատապաններից մեկի վրա, հետևյալ բովանդակությամբ. ԶԳԵՂԵՑԿԱԶԱՐԴ ԻՄ ԱՌՆ/ ԶՎԱՀՐԱՄ ՅԻՇԵՑԷՔ. ԹՎ. ՉԼԶ (1331[12], գծ. 1)։ Սալատապանին հարակից մյուս տապանաքարի կիսաեղծ արձանագրությունն է. ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ՀԱՆԳԸՍՏԵԱՆ ՈՐԴՈՅ ԱՂԱՄՈՆ... ԱՎԱԳԻՆ. ԹՎ. ՉՂԳ (1344, գծ. 2)։

Տաճարի հյուսիսային կողմի նորաբաց տապանաքարերից մի քանիսը ունեն համառոտ հիշատակություններ։ Դրանցից մեկի վրա փորագրված է. ՀԱԲԷԼԻ ԿԷՆԱԿԻՅՆ /ՋԱՄԱԼՆ ՅԻՇԷՅԷՔ. / ԹՎ. ՉՁԹ (1340, գծ. 3)։ Մեկ տարի անց մահանում է նաև ամուսինը և թաղվում կնոջ կողքին, որի տապանագիրն է. ՋՄԵՂՈՒՅԵԱԼ ԾԱՌԱՅՍ Զ / ՀԱՐԲԵԼՍ ՅԻՇԵՅԷՔ. Ի ԹՎ. ՉՂ (1341, գծ. 4)։

Եկեղեցուց հյուսիս-արևմուտք բացվել է թերթաքարե հարթ սալատապան, որի արձանագրված վերին շերտը պոկվել է, մնացել է միայն մեկ գիր՝ ա և ի ԹՎ. ՉՂԲ (1343, գծ. 5)։

Եկեղեցու արևելյան պատի մոտ ևս կատարվել են թաղումներ։ Խոշոր սալատապաններից մեկի վրա մանր տառերով գրված է.

---

9 «Դիվան», պրակ III, էջ 246, արձ. 813։

10 Այգին, թերևս, խիստ պտղաբեր լինելու հետևանքով է կոչվել Դայեկի—Դայակի-ծծմոր քար։ Իսկ այգեգործությունը արենցիների հնագույն և նախասիրած զբաղմունքներից է։ Տեղի այգիներից հաճախ են նվիրվել Վայոց Ձորի մշակութային-կրթական կենտրոն Նորավանքին (Ստ. Օրբելյան, էջ 346, 367, 368, 490, 491)։ Նույն համալիրի գավթի արևմտյան պատի հարավային մասի 1291 թ. ընդարձակ վիմագրի վկայությամբ Ջուրջի թոռ Ամիրան Տարսայիճից 4 հազար դրամով դնել է Արենիի «ՁՅԱՂԹԱ ԱՅԳԻՆ» ու այն, 3 շորու հետ, նվիրել է վանքին։ Այս առթիվ Սյունյաց թեմի առաջնորդ Ստ. Օրբելյանը տարին չորս պատարագ է սահմանել Ամիրային և իր մայր Գոհարխաթունին («Դիվան», պրակ III, էջ 220, արձ. 698)։ Օրբելյանի վկայությամբ, այս Ամիրան, Ջուրջի որդին է, Կապանեցի Մահևանյաց իշխանների թոռը։ Նա Տարսայիճից 4 հազար դրամով «գնէ զԱղթայ այգին որ յԱռիայ» ու այն նվիրել է Նորավանքին, որի դիմաց, Ամիրայի համար սահմանվել է «հինգ պատարագ»։ Ըստ արձանագրության տվյալի, նվիրատվության դիմաց Ամիրայի և իր մոր ստացած պատարագների թիվը, պատմիչի մոտ հիշատակվող հինգի փոխարեն, պետք է ընդունել չորս։

11 Ստ. Օրբելյան, էջ 491։

12 Տասնավոր թվանշանը եղծված է, տառահետքերը նմանվում են Զ-ի (80)։

ա ՁԽԱԹ/ՈՒՆՆ ՅԻՇՄԵՅՑԵՔ.
բ ՅԻՇՄԵՅՑԵՔ / ՀԻՍԱՅՁԱՅՆ / Ա. ՓՈԽԵՅԱԼԻ Ի ՔՐԻՍՏՈՍ/
ԹՎՐԻՆ ՁՂԷ (1348, գծ. 6)։

Եկեղեցու հարավային մուտքի աջ կողմում փորագրված է. ՐԵՅՍ ԲԱՐԸՍԵՅՂՍ, ԳՐԱՅՍՊԱՐՍՅ, / ՊՐԱՐՈՅՆ ՈՎՀԱՆԵՍ ԱՅՂԻՆ ՐՅԻՇԼԱՏԱԿ, ԳԻՐԵՅՐԱՔ / Ի ԹԼՎ. ՊԻ (1371, գծ. 7)։ Երրորդ տողի վերջում, նույն նոտրգրով ավելացված է Ծ։ Հնարավոր է, որ գրիչը թվատառի՝ Հ-ի (70) փոխարեն փորագրել է Ի (20) և այնուհետև ավելացրել է պակասող 50-ը՝ Ծ-ն։ Այս դեպքում արձանագրության թվականը կլինի ՊԻԾ՝ 800+20+50+551=1421։

Նույն մուտքի ձախ կողմում, որմի ստորին շարքում հիշատակագրված է՝ ՁՈՒՄԵԿՆ / ԵՒ ՁԿԷՍԱՒԻԵ / ԱՅ ԳՆԱՅԵԱ / ԼՆ ԱՌ ՔՐԻՍՏՈՅՍ ՅԻՇԵՅԷՔ. ԹՎԻՍ / ՊՀԴ (1425, գծ. 8)։ Եկեղեցու արևմտյան լուսամուտի մոտ քանդակված երկու խաչերի թևերի բացվածքներում փորագրված է. ԹՎՐԻՆ ՁԻԹ (1480, գծ. 9), իսկ հարավային պատի արևմտյան եզրում պահպանվում է հետևյալ վիմագիրը՝ ԹԱՆԿՐԻՎԷՐՄ / ԻՇ ԼՅԻՇԵՅԷՔ Ի ՔՐԻՍՏՈՅՍ. / ԹՎ. / ՁԽԴ (1495, գծ. 10)։ Արևելյան պատի հարավային որմնախորշի ձախակողմյան քարերից մեկի վրա մանր տառերով գրված է. ԵՍ ԲՐԱՅՐՍՐԵՅՂ. ԹՎ. ՁԿ (1511, գծ. 11)։

Եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյան զույգ խաչքարերից ձախակողմյանի քիվի տակ պահպանվում է. ԹՎ. ՁՂ / Ե (1546, գծ. 12), իսկ ներքևի աջ անկյունում՝ եռատող արձանագրության 8—9 տառերը, որոնք չեն ամբողջանում եղծված լինելու պատճառով։ Խաչքարի ձախակողմյան խորանի խաչաթևերին քանդակված են Քրիստոսի խաչելությունը պատկերող մեխ-գամեր, իսկ կամարաղեղների արանքում՝ եղան գլուխ, որոնք Արենիի խաչքարերի քանդակազարդման տարածված մոտիվներից են։

Արենիի եկեղեցու հյուսիսային պատին քանդակված բազմաթիվ խաչերի շարքում 1556 թ. փորագրվել են 28 անուններ։ Հավանաբար այդ տարում սպանվել են 28 արենցիներ, և եկեղեցու որմը դարձել է զոհվածների հիշատակը հավերժացնող հուշասյուն։ Ահա այդ անունները. ՁԱԻՐԱՊԻՆ/, ՁԻՆԻՆ, ԱՂԷԱՅՓԻՐԻԼՆ, ՂԻՅՄԷԻՅԿԷԻՆ, ՇԱՂՎԱՐԴԷԻՆ, ԲԷՍՈԻԷԻՆ, ՄԻՆԱԽԷԱՅԹՈՒՆԻՆ/, ՄԷԼԻՔԷԻՆ, ՍԱՐԻՆ/, ԲԱԲԻՆ, ՌՈՒՇԻՆ, ԱՁՄԻԿԻՆ, ՓԱՇԻՆ, ՄԿՐՏԻՉԷԻՆ/, ՍԱԼՐՅԿԱԻԱՔԷԻՆ, ՊԱՊԻԷՆ, ԲԷԿԷԻՅՃԱՆԷԻՆ, ԳՈՒԼԷԻՆ, ՓԱՇԱՅԷԻՆ/, ԽՐՁԴՈՒՄԻ/Ն/, ԻԲԲԻԿԷԻՆ/, ԱՍՏԵՓԱՆՈՍԷԻՆ, ԲԷԵՅԳԿԻԽ /ԱԹԼՈՒՆՅԻՆ/, ԱՄԻՐԳՈՒԼԻՆ, ՍԷՓԻՆ, ՂՈՒԿԱՅՍԻՆ, ԽՈՆԾԱՏԻՆ/, ՍԱՐԳԻՍԷԻՆ. ԹՎ. ՌԵ (1556[13], գծ. 13)։

Այդ եղեռնական տարում, Աղձոցց ճանապարհին[14] սպանել են նաև

[13] Խմբական սպանության դեպքերը եզակի չեն։ Մարտունու շրջանի Վաղաշեն գյուղում 1713 թ. սպանվել-մահացել են երկու տասնյակ մարդ («Դիվան», պրակ IV, Երևան, 1973, էջ 184—185). «Դիվանից» դուրս են մնացել Վերին Գետաշենի և Ակունքի հարավակողմի բնակավայրերի արձանագրությունները, որոնց համաձայն՝ 1713 թ. այդտեղ ևս սպանվել են շուրջ չորս տասնյակ մարդ (օգտվում ենք մեր հավաքածոյից)։ Ս. Բարխուդարյանը նկատել է, որ Վաղաշենի 1713 թ. տապանագրերը «վկայում են այդ թվականին պատահած որևէ աղետի մասին, թերևս համաճարակ հիվանդության» (նույն տեղում, էջ 178)։ Մեր կարծիքով, Արենիի 1556 թ., Ակունքի, Վաղաշենի և Վ. Գետաշենի 1713 թ. աղետները ոչ թե մահտարաժամ են, այլ ավարառուների չարագործությունների հետևանք։

[14] Աղձի գետ գյուղը Ստ. Օրբելյանի հարկացուցակում (էջ 515) տեղադրված է Սոդք գավառում, 6-ի չափ հարկով։

արենցիներ Փիրիբեկին և նրա որդի Զոհրապին, որոնց անունները ամփոփվել են հայրենի գյուղի եկեղեցու գավթում։ Փիրիբեկ 1-ի որդին և Փիրիբեկ 2-րդի հայրը՝ պարոն Մեհրապը, հոր, որդու[15] և եղբոր հիշատակին, 1556 թ. կանգնեցրել է ճոխ քանդակներով տապանաքարեր և խաչքարեր։ Ներկայումս իր նախնական տեղում՝ եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյունում, պահպան-

Նկ. 2. Փիրիբեկ 2-րդի խաչքարը (1556 թ.)։

վում է միայն Փիրիբեկ 2-րդի խաչքարը։ Սրա նեղ քիվի տակ քանդակված է Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, ստորին մասի փոսորակում՝ հմտամշակ շրջաքանդակ, կենտրոնական խորանում՝ ոչ մեծ խաչաքանդակ, իսկ թևերին՝ խաչելությունը պատկերող չորս մեխ-գամեր։ Խաչաքիվի վրա և նորաբաց ստորին եզրում (նկ. 2) ընթերցվում է՝ ԵՍ ՄԵՀՐԱՊ ԱՂԷՍ ԿԼԱՅՆԿ-

15 1556 թ. Աղձոց ճանապարհին պապի և հորեղբոր հետ թերևս սպանվել է նաև Մեհրապի որդի Փիրիբեկ 2-րդը։

ՆԵՅՑԻ ԽԼԱՅՉՍ ՈՐԴՈՑ / ԻՄ ՓԻՐԻԲԷԿԻՆ հիշատակագրությունը, իսկ խորանի վերին եզրում, ուռուցիկ զարդագրերով՝ թվ. Ռե (1556)[16]։

Գավթում են գտնվում նաև Ակոբ Նկարող-կազմողի ձեռակերտ երկու խաչքարերի վերին մասերը, որոնցից մեկի վրա Քրիստոսի և ավետարանիչների բարձրաքանդակներն են, իսկ քիվի վրա՝ խիստ հողմահարված արձանագրությունը, որը, որոշ վերապահումներով, կարելի է վերծանել այսպես. ԵՍ ՄԵՀՐԱՊՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉԻՍ ՀՈԳՈՆ ՀԱՒՐ ԻՄ / ՓԻՐԻԲԷԿԻՆ՝ (գծ. 14)։ Խաչախորանի վերին կամարաղեղի երկու կողմերում, քանդակներին հյուսված տառերով, ստորագրել է քարգործ վարպետը՝ ԿԼԱՅՁՄԼՈՅՂ ԱԿՈԲ[17], իսկ Փիրիբեկ 1-ի անվան հիշատակությունը եղել է խաչքարի ստորին խաթարված մասում։



Նկ. 3. Հատված Զոհրապի տապանագրից (1656 թ.)։

Թեև պարոն Մեհրապի եղբոր՝ Զոհրապի հիշատակադիր խաչքարը[18] անհետացել է, սակայն պահպանվում է նրա խոշոր տապանաքարը (նկ. 3), հետևյալ հիշատակությամբ. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԶԱՒՐՀՐԱՊԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՓԻՐԻԲԵԿՂԻՆ, ԵՂԲ / ԱՐ ՊԼԱՅՐԼՈՅՆ ՄԵՀՐ / ԱՊԻՆ, ՈՐ ԱՆՄԵՂ ԿՈՏՈՐԵՑԻՆ ԱԽԶՂԱՑ ՃԱՆԼԱՅՊԼԱՅՐՀԻՆ ԵՒ ԹԼՈՅՂԻՆ ՍՈՒՔ ԱՆՄԽԻՆԹԼԱՅ / Ր /. / ԹՎ. Ռե (1556, գծ. 15)։

Այս արձանագրությունը մեջ ենք բերում բնավ ոչ այն պատճառով, որ նախորդ հրատարակիչների և մեր վերծանության միջև կան տարընթերցում-

16 Ս. Բարխուդարյանը խաչքարը չի նկատել և արձանագրությունը մեջ է բերել Քաջբերունու պակասավոր ընթերցմամբ («Դիվան», պրակ III, էջ 32, արձ. 71)։

17 Վարդապետի անունը և կոչումը ներկայացրել է Ս. Բարխուդարյանը (նույն տեղում, էջ 31, արձ. 67)։

18 Խաչքարը տեղում է եղել մինչև XIX դ. վերջերը, և արձանագրությունն ընդօրինակել է Քաջբերունին (նույն տեղում, էջ 32, արձ. 73)։

ներ Զոհրապ, Փիրիբեկ, սուք, անմխիթար բառերում, այլ որովհետև Ս. Բարխուդարյանի հրատարակությունում նրա գծագիրը ներկայացված է շրջված[19]։ Նման վրիպումներ կան «Դիվանի» բոլոր պրակներում։

Հոր, որդու և եղբոր սպանությունից ջատ չանցած մահանում է պարոն Մեհրապը[20]։ Վերը հիշատակված թերատ խաչքարերից երկրորդը վերագրում ենք Մեհրապին, քանի որ այն «նկարվել է» 1559 թ. և կիսաեղծ արձանագրության մեջ ընթերցվում է պարոն բառը, իսկ այդ թվականին Արենիում մահացել է միայն մեկ պարոն՝ Մեհրապը։ Նրա անունը նույնպես, նախորդների օրինակով, գրվել է խաչի ստորին մասում, որը ոչնչացվել է։ Այս խաչքարի վրա ևս, քիվի և խորանախաչի միջև, Քրիստոսի և ավետարանիչների խորհրդանիշ քանդակներն են[21], թևերի բացվածքներում՝ բևեռները։ Քիվի և խո-

Նկ. 4. Պարոն Բաբի տապանաքարի հարավային ճակատը։

ռանի եզրերի կիսաեղծ արձանագրությունը վերծանում ենք այսպես. ԵՍ..., ՄԵԼԻՔԲԷԿՍ ԿԼԱՅՆԿԼՆԵՅՃԼԱՅՔ ԽՐԱՂՍ ՊՐԱՅՐՈՅՆ / ՐՄԵՀՐԱՊԻՆ /։ ԱԿՈԲ ՆԿԼԱՅՐՈ/Ղ/. ԹՎ. Ռ/Ը 1559[22], գծ. 16)։

Եկեղեցուց արևմուտք ընկած տարածքում հայտնաբերվեց նաև պարոն Մեհրապի եղբոր՝ Բաբի (Բաբիկ, Բաբաջան) դադաղաձև տապանաքարը, որի քանդակները և արձանագրությունը միանգամայն անեղծ են (նկ. 4)[23]։ Ահա

---

19 Նույն տեղում, էջ 31, արձ. 68։

20 Տապանաքարի նկարագրությունն ու արձանագրությունը տե՛ս նույն տեղում, էջ 32։ Կարծում ենք տապանաքարի հարավային լանջի արևմտյան եզրի ասպաղեն հեծյալը Մեհրապի քանդակն է։

21 Քրիստոսի, Աստվածածնի, ավետարանիչների քանդակները Արենիի եկեղեցու և խաչքարերի տիրապետող մոտիվներից են։

22 Ս. Բարխուդարյանը ընդօրինակել է վարպետի ստորագրությունը և թիվը միայն (նույն տեղում, էջ 31, արձ. 66)։ Ես անձնական դերանունից հետո ընթերցվում է Սարկիս անձնանունը։

23 Նկատի ունենալով Փիրիբեկյանների տապանաքարերի և խաչքարերի քանդակների թե-



այդ արձանագրությունը մեր վերծանությամբ՝ ԱՅՍ Է ՀԱՆԴԻՍՏ ՊԼԱՅՐԼՈՅՆ ԲԱԲԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՊԼԱՅՐԼՈՅՆ ՓԻՐԼԻՅԲԼԵՅԿԼԻՅՆ, ԵՂԲԱՐ ՊԼԱՅՐԷՈՅՆ /ՄՄՅԵՀԲԼԱՅՊԻՆ. /ԹՎ. ՌԺԴ (1565[24], գծ. 17)։

Սրանով ավարտվում են Փիրիբեկյան տոհմի մասին մեր ունեցած տեղեկությունները։

Մեզ հասած հաջորդ արձանագրությունը փորագրված է եկեղեցու հարավային պատի արևելյան մասում, հետևյալ բովանդակությամբ՝ ԹՎ. ՌԼԷ /1588/. ՄՄԱՐԿՄՈՅՍ ԵՊՄԻՍԿՈՊՈՅՍ ՄԱՋՐԷՑԻ[25] (գծ. 18)։

Եկեղեցու արևելյան պատի վրա, դրսի կողմից կան մի քանի մանրատառ հիշատակություններ։ Դրանցից մեկը հետևյալն է՝ ԵՍ ՈՎԱՍԱՓ ՋՈՒՂԱՅԷՆՑԻՆ. /ԳԻՐՍ Ո ԿԱՐԴԱՑ ԱՐՍՏՈՒԱՅՇԱՅԻՆ ԱՎԱՄՐՅՅՆԻ/. ԹՎ. ՌԽ (1591[26], գծ. 19)։

Շահաբասյան բռնագաղթը ծանր է անդրադարձել նաև արենցիների վրա։ Հայտնի է, որ «մարմնովն պարթևահասակ և յաղթանդամ և սրտիւն արի, բանիւք և խելօքն հանճարեղ» Գրիգոր Արփայեցին մեծ դժվարությամբ դրամ ժողովելով, կաշառել է շահին և Պարսկաստանի Փարվա ու Բուրվարի գավառների հայերին փրկել հավատափոխությունից։ Դրա համար նա 1620 թ. ստացել է պաշտոնական նոմոս՝ թագավորական կնիքով։ Սակայն պարսկական դատարանը այդ քաջ հայրենասերին զրպարտության կեղծ մեղադրանքով մահապատժի է ենթարկել[27]։ Արտագաղթից հետո չի ամայացել երբեմնի փառքից ղրկված Արփան։ Այդ են վկայում տեղում պահպանվող արձանագրությունները։ Այսպես, օրինակ, եկեղեցուց հյուսիս-արևելք կանգնեցվել է սպիտակավուն, պայտաձև տապանաքար հետևյալ հիշատակությամբ՝ ԵՍ ԱՂԱՅՊԷԿԻԿ ՀԿՅԱՆԿԵՑՈՒՅԻ /ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵ ՀՈԳՈՅՆ ՄԻԿՐՄՏԻՉՅԻՆ, ԱՄԷՆ./ Ի ԹՎԻՍ. ՌԾԴ (1605, գծ. 20)։

Արենիի գերեզմանատան դագաղաձև տապանաքարերից մեկի (նկ. 5) հարավային լանջի քանդակներից վեր, նեղ զոտու վրա արձանագրված է՝ ԱՅՍ Է ՀԱՆԴԻՍՏ ԽՈՒՏԱՅՊԱԽՇԻՆ. ԹՎ. ՌԾԴ (1605)։ Մինչ այժմ աննկատ է մնա-

---

մատիկայի ու ոճի նմանությունները, իրավացիորեն դրանք բոլորը համարվել են Ակոռ նկարող-կազմողի ձեռակերտը, թեև նրանցից միայն երկուսի վրա կա վարպետի ստորագրությունը (Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1962, էջ 168)։ Պարոն Բաբի և մի շարք այլ տապանաքարեր ունեն բազմաժանր քանդակներ։ Դիտելի են հատկապես գինու գավի, շշով խորոված (սիրիական և եբրայական աղբյուրներում՝ ձկան) քանդակները, որոնք, թերևս, վաղ քրիստոնեական գարաշրջանից տեսականորեն պահպանվող տերունական ընթրիքի վերապրուկներն են, և արտահայտում են ընդհանուր ճաշկերույթի՝ հացի (նշխար) և գինու միջոցով հաղորդության ծիսական գաղափարը։

24 Ս. Բարխուդարյանը արձանագրությունը վերցրել է Քաչբերունուց («Դիվան», պրակ III, էջ 32, արձ. 74), ուստի և նա չէր կարող շտկել թույլ տրված վրիպումներն ու Մեհրապ անվան սխալ՝ Թհերդա տառադարձումը։

25 Հնարավոր է, որ Կամո քաղաքի ս. Կարապետ եկեղեցու (1848) արևելյան պատին ագուցված խաչքարի (կազմող՝ Մելիքսեթ) արձանագրության մեջ հիշատակված Մարմոս (իմա՝ Մարկոս—Ս. Ս.) եպիսկոպոսը («Դիվան», պրակ IV, էջ 66, արձ. 257), այս և Դաշքենդի Աստվածածին եկեղեցում հանդիպող ՄՄԱՐԿՈՅՍ ԵՊԻՍԿՈՊՈՅՍ, ԹՎ. ՌԽ (1591) նույն անձնավորությունը լինեն։

26 Ջուղայեցիների և տնեցիների անունների բազմաթիվ հիշատակություններ կան XV—XVII դդ. Երևանի, Նորատուսի, Ավանի, Եղվարդի, Գրիմի և այլ վայրերի վիմագրերում։

27 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 163—170։

ցել նաև եկեղեցու արևմտյան կողմի տապանագիրը՝ /ԽՄԱՅՉՍ ՀՄԻՇՄԱ-ՏՄԱՅԿ/ լէյ ՅՈՒՐՔՍԱ/ՉԻՆ. /ԹՎ. ՌՁԲ (1633, գծ. 21)։

Եկեղեցու արևելյան պատին կա ԵՍ ԱՊԱՉՍ /ԳԻՐԵՑԻ. ԹՎ. ՌՀԷ (1638) էր նոտրգիր հիշատակագիրը (գծ. 22)։ Իսկ հյուսիս-արևելյան կողմում պահպանվող շիրմաքարի հյուսիսային ճակատին քանդակված են գունչ-գնչի տված ցուլ և կով։ Հարավային լանջի անավարտ գավթի և շրջագծի մեջ փորագրված են 7 հատիկներ ունեցող կլոր բարձրաքանդակներ։ Սրանց և արևմտյան եզրի



Նկ. 5. Խուտայպախշու տապանաքարը (1605 թ.)։

արձանագրության միջև պատկերված է հասակով մեկ կանգնած, ձեռքերում կացին հիշեցնող գործիքով մարդու բարձրաքանդակ։ Եթե արձանագրության մեր վերծանությունը ստույգ է (նկ. 6)՝ ԹՎ. ՌՂ (1641) ԱՀԱՆԷՍ ԽՉԱԿԵՐՏԱՑ, ապա պիտի ընդունել, որ այս չափազանց ուշագրավ հուշարձանը Հովհաննես վարպետի ինքնաքանդակն է։

Եկեղեցուց հյուսիս-արևելք կա մի սպիտակավուն, դագաղաձև, սակավադեպ հանդիպող ճյուղատարած ծառի քանդակով տապանաքար։ Քաջբերունին սրա արձանագրությունը ներկայացրել է ազատ ընթերցմամբ, որը և մտել է «Դիվանի»[28] մեջ։ Կորած համարվող արձանագրությունը (նկ. 7) հետև-

28 «Դիվան», պրակ III, էջ 33, արձ. 75։ Տապանաքարի վրա Թադոսի հարթաքանդակն է։ Այդ դարի քանդակագործությանը հատուկ է բնական համամասնությունների անտեսումը։ Թեև ձիերի, թռչունների, ծառերի քանդակները հանդես են գալիս բնական ձևերով ու ծավալատարածական փոքրացված համամասնությամբ, սակայն մարդու քանդակները խիստ ոճավորված են և համաչափությունից զուրկ։ Դիտելի է, որ հայկական քանդակագործության մեջ, վաղ

յալն է. ԱՅՍ Է ՀԱՆԳԻ/ՍՏ ԹԱԴՈՍԻՆ. ՈՐ Է ՈՐԴԻ ՏՐԷՐ ԶԱՔԱՐԻՆ, ԹՐՈՂՈՆ ԹԱՄ/ԱՂՈՒԼԻՆ/. ԹՎ. Ռ/ՃԻԱ (1672)։

Եկեղեցու հյուսիսային կողմում հայտնաբերվել է նաև Զաքարի սալատապանը. ԱՅՍ Է ՀԱՆԳԻԼՍՅՏ ՏԼԷՅՐ ԶԱ/ՔԱՐԻՆ. ԹՎ. ՌՃԼ (1681) տապանագրով (գծ. 23)։ Հարավային կողմի հարթ սալատապանի վրա, Արենիում քիչ հանդիպող կապգրերով, փորագրված է՝ ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ/ԶԱՂԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ /ՏՐԷՐ ՄԽԻԹԱՐԻՆ, ԹՎ. ՌՃԻԸ (1769, գծ. 24)։

Նկ. 6. Հովհաննես վարպետի ինքնաքանդակը (1641 թ.)։

Տաճարի հյուսիս-արևելյան անկյունում բացվել է կոպտատաշ փոքրիկ տապանաքար (նկ. 8), որի հյուսիսային ճակատին գրված է՝ ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ/ԳՈՒՀԱՐԻՆ. ԹՎԼԻՅՆ ՌՃԻԹ (1680)։

Եկեղեցուց արևելք, ճանապարհի եզրին գտնվող բազալտե կոպիտ տապանաքարի հարավային ճակատին պատկերված են երկու խաչեր, իսկ հյուսիսայինի վրա արձանագրված է՝ ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ /ՏԷՐ ՅԱՕՀԱՆԻ/ ՈՐԴԻ ԱՂԱՅՊԱՊ/ԻՆ. ԹՎ. ՌՃԼԷ (1688, գծ. 25)։

Եկեղեցու ներսում, հյուսիսային պատի վրա խոշոր տառերով գրված է՝ ՏԼԷՅՐ ՅՈՎՍԷՓ. ԹՎՐԻՆ՝ ՌՃԽԴ (1695, գծ. 26)։ Արևելյան պատի վրա, Հովասափ Ջուղայեցու արձանագրությունից մի փոքր աջ, թվակիր վերջին անտիպ հիշատակությունն է՝ ԱՐՕՆԹՈՒՆ. ԹՎՐԻՆ՝ ՌՄԿԴ (1815, գծ. 27)։

Տաճարի արևմտյան պատի հյուսիսային եզրում նկատելի է՝ ԵՍ ՐՍՅԱ-ՀԱԿՍ ԿԱՆԳՆ/ԵՅԻ ԶԽՄԱՐՉՍ Ի...[29] անավարտ արձանագրությունը (գծ. 28)։

շրջանից սկսած մինչև ուշ միջնադար, մարդը հիմնականում պատկերվել է խիստ ձևափոխված ու ոճավորված, և դա արվել է հիմնականում այն պատճառով, որ մարմնի մնացած մասերի համեմատ խոշոր է պատկերվել գլուխը։

29 Ենթադրում ենք, որ Սահակը եկեղեցու հարավային մուտքի բարավորի վիմագրում հիշատակվող տեր-Բարսեղի հայրն է։

Վերջինից մի փոքր աջ քանդակված երեք խաչերի տակ դրված է՝ ՋՈՎՀԱՆԵՍԻՆ, ՋՍՐԻՄ/ԷՐՈՆԻՆ/, ՋԱՋՐԱՅՐԵԱՅԻՆ ՅԻՇԵՑԷՔ (գծ. 29)։

Թերևս Արենի գյուղի և եկեղեցու համարումն ու հանգամանքներն են պատճառը, որ մարդիկ այստեղ են եկել Ջուղայից, Մազրայից, անգամ Սսից

Նկ. 7. Տեր-Թադոսի տապանաքարը (1672 թ.)։

և իրենց անունը թողել տաճարի պատերին։ Եվ՝ ահա, եկեղեցու հարավային որմին, Մարկոս Մազրեցու անվան մոտ, XVI—XVII դդ. բնորոշ մանրատառ գրերով հիշատակված է՝ ԵՍ ԿՈՍՏԱՆՏԻՆ /ԱՐՍՈՒԾՈՅՑ ԱԲԵՂԱՅՍ ՍՍՑԻ

Նկ. 8. 1680 թ. տապանաքար։

(գծ. 47)։ Իսկ անմիջապես Մարկոս Մազրեցու անվան տակ՝ ԵՍ ՅՈՀԱՆԷՍ (գծ. 30)։

Գավթից մի փոքր արևմուտք գտնվող դագաղաձև տապանաքարի (XVI դ.)

հարավային կողին պատկերված են մարդու, ձիու, սազանդարի, հացի, գավի, իսկ հյուսիսային ճակատին՝ վայրի այծ հոշոտող առյուծի քանդակներ։ Քարի երկնահայաց թեք լանջին գրված է՝ ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ՇԱՐԻՆ[30] (գծ. 31)։

Եկեղեցու հյուսիսային կողմի դագաղաձև շիրմաքարերից մեկն ունի մարդկանց, գավի, հացի, մկրատի և այլ գործիքների քանդակներ, իսկ հյուսիս-արևմտյան եզրում՝ ԱՅՍ Է /ՀԱՆԳ/ԻՍՏ Ե... թերավարտ արձանագրություն (գծ. 32)։ Սրանից ոչ հեռու, նորաբաց սալատապանի վրա (XVI դ.) փորագրված է. ԳԱՅԼԱՅԶԱՅԳ ՅԻՇԵԼ ՅԷՔ Յ (գծ. 33)։

Դագաղաձև մի այլ տապանաքարի վրա ընթերցվում է՝ ԽՈՒՐԹԻ Ե ՏԱՊԱՆՍ (գծ. 34), իսկ եկեղեցու արևմտյան պատին՝ ՌԸՍՏՄԱԼԿԸԵՍ, ԳՐԻԳՈՐ։

Եկեղեցու արևմտյան մուտքից ձախ, ցածից երրորդ շարքում, XIV—XVI դդ. բնորոշ գեղագիծ պատվոնշանով փորագրված է՝ ԱՄՍՏՈՒԱԾ (գծ. 35)։

Եկեղեցու արևմտյան մուտքից ձախ, հազիվ նկատելի մանր տառերով գրված է՝ ԶՄՊԼՈՅՂՈՍ ՅԻՇԵՅԵՔ Ի ՔՐԻՍՏՈՍ (գծ. 36)։ Նույն մուտքից աջ, ներքևում՝ ԵՍ ԹԱԹՈՍՈՅ (գծ. 37), իսկ սրա տակ՝ ԹԱԹՈՍ Ա (գծ. 38)։ Այս անունը կրկնված է նույն պատի արևելյան կողմում ևս։ Եկեղեցու հյուսիսային պատին, 28 արենցիների անունների տակ քանդակված խաչից ձախ արձանագրված է՝ ԽԱՉՄՍՅ ՀԱՆԵՅԻ ԵՍ ԴԱՏՈՍ (գծ. 39)։ Արևելյան պատի հարավային եզրում փորագրված է հետևյալ տառաշարքը՝ ԻՐԻԱՆՅ (գծ. 40)։

Գավթի հարավ-արևմտյան մասում, նորաբաց սալատապանի վրա կա եղծված մի արձանագրություն, որից ընթերցվում են միայն ՍԻՄՈՆ և ԱՂԱԻԹՍ բառերը (գծ. 41)։

Այժմ վերահրատարակվող այն արձանագրությունների մասին, որոնցում կատարել ենք էական շտկումներ։

Այսպես, եկեղեցու հարավային մուտքի բարավորի արձանագրության՝ Ս. Բարխուդարյանի հրատարակած գծագիրը անճանաչելիորեն հեռացել է իր բնագրից[31] և քանի որ բերում ենք մեր գծագիրը, ուստի տալիս ենք նաև նրա վերծանությունը՝ ԹՎ. /ՌԽԸ (1449). ԵՍ ՏՄԷՐ Բ/ԱՄՐՍԵՂՍ ԿԱՄՆԿՄՆԵՅԻ ԶԽՄԱԶՍՅ Ի ՓՐԿՈՒԹՄԻՆՅ ՀՈԳՄՈՅՅ ՀԱՄԻՐ ԻՄՄՈՅՅ ՍԱՄՀԱԿՄԱՅՅ ՄՅՅԻՇԼԵՅՅԼԷՅՔ Ի ՔՄՐԻՍՏՈՅՍ (գծ. 42)։

Գրեթե անմշակ տապանաքարերից մեկի արձանագրությունը հրատարակվել է տողերը խառնված, առանց իրական սղում-կրճատումների, իսկ թվատառի Զ-ն դարձել է Հ[32]։ Այն ունի հետևյալ տեսքը՝ ԽՄԱՅԶՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ Է / ԵԻԽԱՆԻՆ. /ԹՎՄԻՆՅ ՌԶԲ (1633, գծ. 43)։

30 Շարը իգական անձնանուն է և չպիտի շփոթել Շարայի հետ։

31 «Դիվան», պրակ III, էջ 30, արձ. 62։ Ի դեպ, Սյունիքի (այդ թվում Գեղարքունիքի և Սոդքի) վիմագրերը գրչությամբ որոշակիորեն տարբերվում են Գուգարքի, Շիրակի հստակ, համաչափ բոլորագիծ երկաթագիր տառերից։ Դրանք գրված են անփույթ, հաճախ՝ անկանոն, անհավասար, ծուռումուռ տառերով։ Սյունյաց դպրոցի Հ, Է, Թ, Զ, Ծ, Ց, Շ և այլ գրերը որոշակիորեն տարբերվում են Շիրակ-Գուգարքյան վիմագրերից։

«Դիվանի» մեջ Արենիի արձանագրությունների գծագրերը դարձել են խիստ շքեղ, համաչափ տառերով հորինվածքներ, երբեմն խախտվել են տառերի քանակն ու հաջորդականությունը, որը հաստատվում է «Դիվանի» 63, 64, 70 արձանագրությունների օրինակով։ Հավանաբար, այդ պատճառով էլ նրանց մեջ կան բացթողումներ, անհարկի ու չպատճառաբանվող սրբագրումներ, խաթարվել են տառակապակցությունները, սղումները, իրական տառաշարքերը, որոնցից էլ առաջացել են բառիմաստների ու անվանումների աղավաղումներ։

32 Նույն տեղում, էջ 32, արձ. 70։

Եկեղեցուց արևելք գտնվող, առանց քանդակների տապանաքարը համարվել է կորած և նրա հյուսիսային ճակատի արձանագրությունը հրատարակվել է ազատ վերծանությամբ։ Այն պետք է ընթերցել՝ Ալ՝ՅՆՍ Է ՏԱՊԱՆ ՓԻՐՎԷԼԱԹԻՆ, /ՈՐ Է ՈՐԴԻ ԱՌԱՔԷԼԻՆ. ԹՎ/Ի}Ն /ՌՃԼԵ (1686[33], գծ. 44)։

Տաճարից հարավ ընկած սալատապանը նույնպես համարվել է կորած և «Դիվանում» տպագրվել է Քաշբերունու թերի ընդօրինակությունը։ Այդ արձանագրությունը հետևյալն է՝ ԹՎ. ՌՃՄԷ (1708). ՄԴՅԱՄՄՅԲԱՆ ՅԻՇԵԱՏԱԿ Է ԾԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ՏՄԷՐ ԱՎԱՆԷՍԻՆ[34] (գծ. 45)։

Նկ. 9. Պատրիկի և Խոյանդի արձանագրությունը։

Գավթում նորերս կանգնեցված խաչքարի արձանագրության քիվի և մեջտեղի տողերը համարվել են «բոլորովին անվերծանելի»[35]։ Նկատենք, որ խաչքարի ստորին մասում ՉՂ (1341) թվական չկա, թեև իր ոճով այն հատուկ է XIV դ.։ Ամբողջացնելով խաչքարի քիվի միջին և ստորին մասի արձանագրությունը, այն վերծանում ենք հետևյալ կերպ՝ ԵՍ ՄԽԻԹ/ԱՐ ԿԱՆԿԼՆ}Ե/ԼՅԻՀ ԽՄԱՉՅՍ ԿՈՒՏԻՍ/ՄՈՐԴՅՈՒՆ ՈՒՍԹԱ ԱՄԻՐԻՃԱՄ՝ԼԻՆ՝ /ԵՒ ԿԱՍԷՔ ՈՐՔ ԿԱՐԴԷՔ /ՅԻՇԵՑԷՔ ՝Լ՝Ի՝ ՔՄՐԻՍՏՈՅՍ (գծ. 46)։

Եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային եզրի հիշատակագրությունը նույնպես հրատարակվել է տողերը խառնված, իսկ Պատրիկ անձնանունը ընթերցվել է Կարեն, Խոյանգը՝ Խոյդան[36]։ Այն ներկայացնում ենք մեր վերծանությամբ (նկ. 9)՝ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՄՐԻՍՏՈՅՍ Զ/ՊԱՏՐԻԿՆ ԵՒ ԶԱ/ՄՈՒՍԻՆՆ ԻՒՐ Զ/ԽՈՅԱՆԴՆ ԵՒ ՈՂՈՐՄԷԱ։

33 Նույն տեղում, էջ 33, արձ. 76։
34 Նույն տեղում, արձ. 78։
35 Նույն տեղում, էջ 30, արձ. 64։
36 Նույն տեղում, արձ. 63։

Արենիի վիմագրերը գյուղի ավելի քան 600-ամյա ժամանակահատվածի (1191—1815) պատմության խոսուն վկաներն են, որոնք պարունակում են ժամանակագրական, պատմական, սոցիալական, կառուցողական կյանքի մասին թեև համառոտ, բայց եզակի տվյալներ։ Այդ վիմագրերում հավաստվող անձնանունները, տեղանունները, տառերի հնագրական ինքնատիպությունները ևս արժանի են մասնագիտական հատուկ քննության։

НОВОВЫЯВЛЕННЫЕ НАДПИСИ ИЗ АРЕНИ

СУРЕН САГУМЯН

Резюме

Арени (Арпа) является одним из древних селений Вайоц Дзора. Для изучения истории этого села большое значение имеют надписи, сохранившиеся на его территории. Еще с середины прошлого века они привлекли к себе внимание историков-эпиграфистов. Наиболее полное собрание этих надписей (20) в свое время было представлено С. Бархударяном. В настоящее время выявлено 60 надписей, самой древней из которых является надпись, относящаяся к 1191 г., а надпись сравнительно позднего периода датируется 1815 г.

Нами представлены 43 надписи, по сей день неопубликованные, а также 12 опубликованных ранее надписей с дополнениями и исправлениями.